ԱՐՈՒԵՍՏ

ՉԻՆԱԿԱՆ ՎԻՇԱՊՆԵՐՈՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻ ՎԱՐԱԳՈՅՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՄ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔԻ «ՎԻՇԱՊԱԳՈՅՐԸ»

Վարագոյրի չափերն են՝ բարձ.՝ 508 սմ., լայն.՝ 690 սմ.

Ներածութիւն

Հայոց եկեղեցու վարագոյրները պարզ ծիսական պարագաներ չեն։ Յաճախ դըրանցում նկատւում են խորհրդաբանական եւ, առհասարակ, մշակութաբանական այնպիսի խտացուած շերտեր, որոնք արտացոլում են հայերիս աշխարհընկալման իւրօրինակ դրսեւորումները։ Ահա այս համատեքստում փորձելու ենք քննութեան առնել Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքում պահուող 18-րդ դարի մի իւրօրինակ խորանային վարագոյր[1]*։ Վերջինս բացառիկ է, քանի որ նրա հիմնական պատկերագրութիւնը կազմուած է չինական վիշապներից։ Խնդիրն այն է, որ վիշապը քրիստոնէական միջավայրում վաղուց փոխակերպուել էր չարի խորհրդանիշի*[2]*։ Հետեւաբար՝ պարզ հարց է ծագում. ինչպէ՞ս է չինական վիշապներով պատկերագրութիւնը համադրուել եկեղեցում։ Հետաքրքրական է, որ նման տարօրինակ պատկերագրութեամբ, վարագոյրների հանդիպում ենք յատկապէս Երուսաղէմի հայկական հաւաքածուում*[3]*։ Դրա*

---

[1] Այս վարագոյրի մասին տեղեկացել ենք ի շնորհիւ Երուսաղէմի միաբան Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեանի։ Մեր խորին երախտագիտութիւնն ենք յայտնում Հայր Սուրբին վարագոյրի լուսանկարները բարեկամաբար մեզ տրամադրելու համար։

[2] Ի դէպ, այս վարագոյրը Երուսաղէմի հայ միաբանների շրջանում յայտնի է «վիշապագոյր» անուամբ։

[3] Մէկ այլ բացառիկ պատկերագրութեամբ վարագոյրի վերաբերեալ տէ՛ս **Ն. Վ. Աշուղաթոյեան**, *«Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքին 1818 թուականին նուիրաբերուած եկեղեցական մի վարագոյրի մասին»*, «Էջմիածին» ամսագիր, 2021, Բ։

պատճառը, հաւանաբար, այն է, որ Երուսաղէմը հանդիսացել է միջ-մշակութային հանդոյց՝ ազգերի եւ կրօնների իւրօրինակ խաչմերուկ։ Այդ հանգամանքը հաշուի առնելով՝ մեր այս հետազօտութիւնում յիշատակուած վարագոյրը փորձելու ենք դիտարկել ոչ միայն զուտ պատկերագրական, այլեւ միջ-մշակութային փոխազդեցութիւնների տեսանկիւններից։ Վարագոյրի վերաբերեալ մեր հետազօտութիւնը աւելի ամբողջական դարձնելու նպատակով առանձին կ'անդրադառնանք նաեւ դրա նուիրատուին եւ այն վերականգնող անձանց։

Վարագոյրի պատկերագրութիւնը եւ ոչ միայն

Վարագոյրը ասեղնագործուած է սեւ եւ մուգ մանուշակագոյն թաւշեայ կտորների վրայ՝ հարթակարի կարատեսակով։ Վարագոյրի կենտրոնում սեւ ֆոնի վրայ պատկերուած է չինական mang *վիշապ, իսկ նրա աջ եւ ձախ կողմերում ընդհանուր մակերեսով սփռուած են վեց մեծ եւ եւս ութ աւելի փոքր վիշապներ։ Հիմնական սեւ մակերեսի ստորին հատուածում ասեղնագործուած է ջրային բոյսերի եւ ծովային ալիքների մէկ միասնական գօտի։ Վարագոյրը ունի երեք գօտի, որոնցից մէջտեղինը սեւ կտորից է, որի վրայ եւս նկատելի են վիշապ եւ ալիք յիշեցնող պատկերներ։ Միւս երկու գօտիները մուգ մանուշակագոյն են, որոնց վրայ ոչինչ պատկերուած չէ՝ բացառութեամբ մի գօտու, որի վրայ առկայ են ասեղնագործ երկու արձանագրութիւն։ Կենտրոնական մեծ վիշապի պատկերից վեր՝ ընդհանուր կոմպոզիցիայից առանձնացող ուղղանկիւն շրջանակի մէջ, պատկերուած է Յիսուս Քրիստոսը՝ ձեռքին յաղթանակի դրօշը, նրանից ներքեւ՝ բացուած գերեզմանը՝ աջ եւ ձախ կողմերում հրեշտակներ (**նկ. Ա**)։ Վարագոյրի վիշապները պատկերուած են չորս ճանկերով։ Չինական մշակոյթում այդ ճանկերի քանակը ունի յատուկ նշանակութիւն եւ խորհրդաբանութիւն։ Օրինակ՝ հինգ ճանկանի վիշապի պատկերները կիրառուել են կայսեր կամ իւր ընտանիքի կողմից, իսկ չորսականը[4] ընդհանուր ազնուականութեան[5]։*

Նկ.՝ Ա

Հարկ է նշել, որ հայոց մէջ վիշապի կերպարը օտար չէ։ Այն մեզանում ունի հազարամեակներ ձգուող արմատներ։ Դրա լաւագոյն վկան Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում կանգնած վիշապ-կոթողներն են։ Վիշապը հայոց մէջ չի սահմանափակւում լոկ քարէ կոթողներով. այն փաստացի ներկայ է ժողովրդական զրոյցներում եւ կիրառական արուեստի տարատեսակ դրսեւորումներում։ Հայաստանում քրիստոնէութեան հաստատումից յետոյ վիշապի կերպարը այլափոխւում է, եւ այն սկսում է նոյնացուել քրիստոնէական ընկալման չարի կերպարի հետ։ Քրիստոնէական պատկերագրութիւնը վիշապին հիմնականում ներկայացնում է Աստուածաշնչից կամ սրբազան աւանդութիւնից բխող կոնկրետ դրուագներում։ Սաղմոսներից մէկում

[4] Նման պատկերագրութեամբ օրինակների հանդիպել ենք բազմաթիւ չինական արքունական տարազներում (Chinese robes): Չորս ճանկերով վիշապի պատկերի 18-րդ դարի մէկ այլ օրինակ տե՛ս https://www.metmuseum.org/art/collection/search/64916

[5] **Garrett, Valery M.**, Mandarin Squares: Mandarins and their insignia, Oxford University Press, 1990, p. 47.

*կարդում ենք. «**Դու քո զօրութեամբ ծովը հաստատեցիր, եւ վիշապների գլուխը խորտակեցիր ջրերում: Դու վիշապի գլուխը փշրեցիր եւ որպէս կերակուր տուիր հնդիկների զօրքին**»[6]: Օրինակ՝ այս տողերի հիման վրայ հայ մանրանկարիչները շատ խորհրդանշական կերպով ներկայացնում են Քրիստոսի մկրտութեան տեսարանը, որտեղ Յորդանանում մկրտուող Յիսուսը ոտնակոխ է անում ջրում ծպտուած վիշապին[7]: Եկեղեցական պատկերագրութեան մէջ լայն տարածում ունեն վիշապամարտիկ սրբերի կերպարները, որոնք Տիրոջ զօրութեամբ յաղթում են չարին, իսկ չարը այդ պատկերներում ներկայանում է վիշապի կերպարանքով: Վիշապամարտիկ սուրբերը մեզանում*

Նկ.՝ Բ

*հիմնականում պատկերւում են Ս. Գէորգի եւ Ս. Սարգիս զօրավարի օրինակներով: Ինչպէս օտար, այնպէս էլ հայ քրիստոնէական պատկերագրութիւնում վիշապը լայնօրէն պատկերուել է նաեւ ահեղ դատաստանի դրուագներում, որտեղ հրեշտակապետը դատապարտուածներին յաճախ ուղղորդում է դէպի վիշապ-գազանի երախ՝ մատնելու յաւիտեան կործանման: Վիշապ-գազանի կերպարով ահեղ դատաստանի մեզ համար հետաքրքրական օրինակի հանդիպել ենք Յովհաննէս Շարամբէյեանի անուան Հայաստանի ժողովրդական արուեստի թանգարանում՝ խորանային մի վարագոյրի վրայ[8], որում վիշապ-գազանը չափազանց արտայայտիչ է պատկերուած (**նկ. Բ**): Վերադառնալով Երուսաղէմեան վիշապազարդ վարագոյրին՝ նշենք, որ նրա պատկերագրութիւնն իրօք բացառիկներից է, քանի որ յստակօրէն չի արտայայտում աստուածաշնչեան կոնկրետ դրուագ, թէեւ նրա մի հատուածում առկայ է Քրիստոսի Ս. Յարութեան պատկեր: Մեզ համար հետաքրքրական է, թէ պատկերագրական ինչ խնդիր է դրուել վարագոյրը ստեղծելիս:*

Պատկերագրութեան խնդիրները հասկանալուն զուգահեռ կարեւոր է պարզաբանել հետեւեալ հարցը՝ արդեօք վարագոյրի վիշապային պատկերները ասեղնագործուել

[6] Սաղմոս 73:13-14:

[7] Այս մասին լրացուցիչ տե՛ս, **Լ. Աբրահամեան**, Քրիստոսը որպէս վիշապամարտիկ. եկեղեցական աւանդոյթը եւ նկարչի յիշողութիւնը, *Վիշապը հէքիաթի եւ իրականութեան սահմանին*, Երեւան, 2019, էջ 361-370:

[8] Վարագոյրը ստեղծուել է Նոր Բայազետում 1853 թուականին: Թանգարանում այն հաշուառուած է 4577 ֆոնդային համարի ներքոյ:

*են Քրիստոսի պատկերի հետ համաժամանակ, թէ վերջինս յետագայ աւելացում է։ Քրիստոսի պատկերի ուղղանկիւն շրջանակի ստորին մասում առկայ է յիշատակի արձանագրութիւն, որը գրուել է վարագոյրի նուիրատուութիւնից 32 տարի անց։ Թէեւ արձանագրութիւնը ուղղակիօրէն չի խօսում նրանում յիշատակուած կնոջ դերակատարութեան մասին, սակայն կարելի է ենթադրել, որ խօսքը վերաբերում է վարագոյրի վերանորոգութեանը, որի ժամանակ, ամենայն հաւանականութեան, աւելացուել է նաեւ Քրիստոսի այդ շրջանակը։ Դա է փաստում նաեւ շրջանակից ներս եղած գոյների տարբերութիւնը՝ համեմատ ընդհանուր պատկերների գոյների։ Ուստի, եթէ աւելացումը արուած է աւելի ուշ, ապա հաւանական է, որ Քրիստոսի պատկերի տեղը նախատեսուած է եղել աւելի վաղ։ Այդ է վկայում շրջանակի աջ եւ ձախ կողմերում գտնուող մանր պատկերների դասաւորուածութիւնը։ Աւելի քիչ հաւանական ենք համարում այն, որ Քրիստոսի պատկերի փոխարէն եղել է վիշապի պատկեր, որը աւելացման ժամանակ քանդուել է։ Այս ենթադրութիւնից ելնելով՝ կարծում ենք, որ նուիրատուն նպատակային գնել (գուցէ պատուիրել) է ժամանակի համար գերթանկարժէք[9] վարագոյր եւ նուիրել եկեղեցուն։ Ենթադրում ենք, որ վարագոյրը ընծայուել է մեծ նուիրական զգացումով, եւ քանի որ նուիրողը եղել է մեծ հեղինակութիւն վայելող անձ, վարագոյրի պատկերագրութիւնը չի դարձել առաջնային քննարկման նիւթ, պարզապէս ընկալուել է, որպէս ժամանակի համար թանկարժէք նուիրաբերութեան ակտ։ Եկեղեցին ընդունել է վարագոյրը՝ յատկապէս հաշուի առնելով դրա գեղագիտական եւ կատարողական առանձնայատկութիւնները։ Այն, որ վարագոյրի վիշապները չեն խորհրդանշել յատուկ քրիստոնէական դրուագ, լրացուցիչ հիմնաւորում են Երուսաղէմին ընծայուած չինական վիշապազարդ եւս երկու աւելի փոքր վարագոյրներով, որոնցում քրիստոնէական տարրեր չկան[10] (**Նկ. Գ**)։*

Նկ.՝ Գ

Փաստօրէն՝ ընածայումից շատ չանցած վարագոյրի պատկերագրութեան մէջ եղել է բովանդակային միջամտութիւն, որով վարագոյրի պատկերագրութիւնը դարձել է քրիստոնէական խորհրդաբանութեան տեսանկիւնից ընկալելի։ Առհասարակ, վարագոյրը իւրօրինակ խորհրդաբանական պատնէշ է Աստծոյ եւ մարդու միջեւ, որը մարդուն յիշեցնում է Աստծուց հեռացած լինելու եւ ըստ այդմ՝ մեղքից ազատուելու անհրաժեշտութեան մասին։ Երուսաղէմում այս վարագոյրը աւանդաբար կիրառւում է Մեծ Պահքի Դատաւորի կիրակիին։ Այդ օրերի ամբողջ խորհուրդն այն է, որ Տէրը մարդուն իւր առակի[11] միջոցով սովորեցնում է կանգնել յարատեւ՝ առանց ձանձրանալու աղօթ-

[9] Այն, որ վարագոյրը իր ժամանակին եղել է շատ արժէքաւոր, կասկածից վեր է։ Անգամ մեր օրերում նման վարագոյր ասեղնագործելու համար անհրաժեշտ կը լինի ծախսել ամիսներ, եթէ ոչ տարի եւ աւել ժամանակ։ Այսօր էլ 18-19-րդ դարերի ասեղնագործ վիշապներով տեքստիլները յայտնի աճուրդներում շարունակում են վաճառուել մեծ արժէքով։ Տե՛ս Քրիսթիս աճուրդից մի օրինակ՝
https://www.christies.com/lot/lot-a-silk-and-metal-thread-nine-dragon-5978946/?from=searchresults&intObjectID=5978946

[10] Այդ վարագոյրների հակառակ կողմում առկայ է քրիստոնէական մոթիվով ասղենագործութիւն, որը սակայն ենթադրւում է, որ վիշապազարդ վարագոյրի հետ բովանդակային որեւէ կապ չունի. այն յետագայ աւելացում է։

[11] Ղուկ. 18:2-5։

*քի[12] եւ ըստ այդմ՝ հոգով ապաշխարութեան։ Ուստի այս համատեքստում, երբ վարագոյրը դիտարկում ենք որպէս ապաշխարութեան կանչելու խորհրդաբանական գործիք, մեզ համար աւելի հասկանալի է դառնում, թէ վիշապների պատկերները Տիրոջ հետ մի հարթութիւնում ինչ պատգամ են փոխանցում հաւատացեալին։ Հակուած ենք կարծելու, որ Քրիստոսի պատկերի աւելացումով վիշապների պատկերները՝ յատկապէս իւր մուգ ֆոնով, դիտողին ներկայացնում են դժոխքի տեսարան։ Քրիստոսի Ս. Յարութեան պատկերը այս համատեքստում խորհրդանշում է դժոխքի աւերումը եւ յաղթանակը վիշապի, այսինքն՝ չարի նկատմամբ։ Այս գաղափարին շատ պատկերաւոր կերպով հանդիպում ենք 1609 թուականին Տիգրանակերտում նըկարազարդուած ձեռագրի մանրանկարում[13], որտեղ Քրիստոսը յաղթանակի դրօշ-նիզակով խոցում է վիշապին եւ աւերում դժոխքի դռները (**Նկ. Դ**)։ Այսպիսով՝ հաշուի առնելով վարագոյրի ֆիզիկական չափերի համապատասխանութիւնը Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայր տաճարի աւագ խորանի չափերին[14]՝ կարծում ենք, որ վարագոյրը նպատակային պատուիրուել է հէնց այդ խորանի համար։ Յետագայում աւելացուել է Քրիստոսի դրուագը, եւ վարագոյրի պատկերագրութիւնը քրիստոնէական տեսանկիւնից դարձել է մեկնելի։*

Նկ.՝ Դ

Անդրադառնալով հայոց մէջ չինական մշակութային ներթափանցումներին՝ նշենք, որ դրանք աւելի տեսանելի են եղել Կիլիկեան հայոց թագաւորութեան ժամանակաշրջանից։ Յատկապէս, երբ հայոց սպարապետ Սմբատը, ապա նաեւ իւր եղբայր՝ հայոց թագաւոր Հեթումը, մեկնեցին Հեռաւոր Ասիա՝ մոնղոլների հետ հանդիպման՝ կնքելու յայտնի դաշնագիրը։ Հայոց թագաւորը վերադառնում է բազում նըւէրներով, որոնց մի մասը պատրաստուել էին Չինաստանում, իսկ այդ շրջանում մոնղոլները մեծ ազդեցութիւն ունէին նաեւ չինական տարածքներում[15]։ Այդ պատմական կարեւոր իրադարձութեան արդիւնքում Կիլիկիան Հայաստան են ներթափանցում տարբեր իրեր, ո-

Նկ.՝ Ե

[12] **Մ. Արք. Օրմանեան**, Համապատում, Ս. Էջմիածին, 1997, էջ 471-473:

[13] ՄՄ 4912:

[14] Գուցէ վարագոյրի մուգ մանուշակագոյն գոտիները առիթ տան կարծելու, որ վարագոյրը յետագայում մեծացուել է՝ յարմարեցուելով խորանին։ Իրականում մենք հակուած չենք նման կարծիքի, քանի որ վարագոյրի ամենավաղ թուագրուող առնանագրութիւնը գտնում է մանուշակագոյն գոտիներից մէկի վրայ։

[15] **D. Kouymjian**, *Chinese elements in Armenian Miniature painting in the Mongol Period*, Armenian Studies: In Memoriam Haig Berberian, Lisbon, 1986, p. 416.



Նկ.՝ Զ

*րոնք կարող էին իրենց ազդեցութիւնը թողնել տեղի մշակոյթի վրայ։ Այդպիսի լաւագոյն օրինակ է դիտարկւում Հեթում Երկրորդ թագաւորի ձեռագիր Ճաշոցը[16], որի որոշ դրուագներ դիտարկւում են իբրեւ չինական ազդեցութեան հետեւանք[17] (**Նկ. Ե, Զ**)։ Մեզ համար առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում կիլիկեան մի մանրանկարչական դրուագ[18], որում պատկերուած է ձեռնադրութեան տեսարան։ Ձեռնադրող հոգեւորականի հանդերձանքի վրայ պատկերուած է չինական վիշապ, որը իր պատկերագրութեամբ եւս շատ մօտ է վիշապազարդ վարագոյրի վիշապի տիպին (**Նկ. Է**)։ Ակնյայտ է, որ եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականի հանդերձանքում չէին կարող յայտնուել պատահական տարրեր, եւս առաւել՝ միտումնաւոր վերարտադրուել ժամանակի մանրանկարչութիւնում։ Փաստօրէն՝ չինական ծագման մոթիվները հայոց եկեղեցում ներկայ են եղել շատ աւելի վաղ, քան մեր վիշապազարդ վարագոյրն է։ Առհասարակ, վիշապի կերպարը եկեղեցական հանդերձանքում նորոյթ չէ։ Յատկապէս կաթողիկոսական հանդերձանքի համալիրում վիշապը առկայ է խոյրի, գաւազանի խորհրդաբանութեան մէջ[19]։ 18-րդ դարում նկատւում են չինական մշակոյթի ներթափանցման այլ օրինակներ։ Չինաստանում հայ ազնուականութեան[20], ինչպէս նաեւ բարձրաստիճան հոգեւորականութեան համար պատրաստւում*

Նկ.՝ Է

[16] ՄՄ 979:

[17] *Chinese elements in Armenian Miniature painting in the Mongol Period*, p. 420-426:

[18] ՄՄ 197: Այս ձեռագիր Աւետարանը ստեղծուել է 1287 թ. Կիլիկիայի Ակներ վանքում Յովհաննէս Արքաեղբօր կողմից:

[19] **Ս. Խաչմանեան**, Վիշապի խորհրդաբանութիւնը կաթողիկոսի հանդերձանքի համալիրում եւ նրա արտացոլումը միջնադարեան մանրանկարչութեան մէջ, *Վիշապը հէքիաթի եւ իրականութեան սահմանին*, Երեւան, 2019, էջ 358:

[20] Ազնուականութեան համար պատրաստուած սպասքի լաւագոյն օրինակների հանդիպում ենք Գալֆայեան (Շուեցարիա) հաւաքածոյում: Տե՛ս Suisse-Arménie. La collection Kalfayan, sur le chemin de la mémoire, 2015,

Նկ.՝ Ը

Նկ.՝ Թ

*է յախճապակէ սպասք (**նկ. Ը, Թ**)[21], որի պատկերագրութիւնը միաձուլում է չինական նկարչական մտածողութիւնը եւ քրիստոնէական մոթիվները, այլ կերպ ասուած՝ սինթէզում են երկու տարբեր քաղաքակրթութիւններ։ Այսպիսով՝ վիշապազարդ վարագոյրը, թէեւ եկեղեցական վարագոյրների շարքում բացառիկ է, սակայն պէտք է նշենք, որ չինական մտածողութեան տարրերը տարբեր ժամանակներում տարբեր դրսեւորումներով համադրուել են հայկական մշակոյթում։*

Վարագոյրի նուիրատուն եւ վերանորոգողները

*Բաւականին ուշագրաւ է քննարկուող վարագոյրի նուիրաբերողի անձը։ Վարագոյրի վրայ՝Ս. Յարութեան պատկերից վերեւ, կայ նուիրաբերութեան վերաբերեալ արձանագրութիւն, որում մասնաւորապէս յիշատակուած է. «**Յիշատակ է պատուական վարագոյրս գերօրհնեալ Եաղուպ Աղային ի Սուրբ Յակոբ որ Երուսաղէմ ՌՄ (1751)**»[22]։ Այսպիսով՝ ո՞վ էր յիշատակուած գերօրհնեալ Եաղուպ Աղան։ Յայտնի է, որ նա ծընուել է 1672 թուականին Արեւմտեան Հայաստանի Ակն քաղաքում։ Յետագայում տեղափոխուել է Կ. Պոլիս եւ դարձել մեծ ազդեցութիւն ունեցող ազգային գործիչ։ 1703 թուականին սուլթանի հրամանով Եաղուպ Աղան կարգւում է «**Արքունի սեղանաւոր եւ վառօդապետ (պազիրկեան պաշի), որ այն ժամանակուան համար ըսել էր մեծ դրամատէր, ու կը համապատասխանէր ներկայ ժամանակներու վարկային հաստատութեանց եւ դրամատանց կատարած գործառնութեանց**»[23]։ Մաղաքիա Արք. Օրմանեանը Եաղուպ Աղային կոչում է «Եաղուպ Ամիրա» եւ նրա վերաբերեալ գրում. «**1751-ին Երուսաղէմ ուխտի կ'երթայ իր կնոջ Սողոմէի հետ, թանկագին ընծաներ կը տանի եւ***

p. 255-265.

[21] Նկ. Ը-ում ներկայացուած են Գալֆայեանի, իսկ նկ. Թ-ում՝ Ն. Աշուղաթոյեանի հաւաքածոներից նմոյշներ։

[22] **Բ. Վրդ. Գալէմտէրեան**, Յիշատակարանք սպասուց Սրբոց Յակոբեանց Մայր տաճարի, Երուսաղէմ, 2008, էջ 56։

[23] **Հ. Մ. Վրդ. Պոտուրեան Պարտիզակցի**, Հայ հանրագիտակ, հտ. Ա, Պուրէշ, 1938, էջ 646։

Ս. Յարութեան տաճարին վերնատունը նորոգել կու տայ»[24]: *Այն, որ Եաղուպ Աղան մեծապէս օժանդակել է Երուսաղէմի հայոց վանքին, փաստւում է տարբեր աղբիւրներով: «**Նալեան պատրիարք, անոր գեղեցկատեսիլ դրսերեւոյթին ու կատարած բարեգործութեանց համար, զինք յորջորջած էր որպէս նոր Յովսէփ Գեղեցիկ մը եւ տաճարաշէն երկրորդ Զորաբաբէլ մը»***[25]: *Աստուածատուր Եպս. Յովհաննէսեանցի կազմած մի աշխատութեան մէջ ներկայացւում է Եաղուպ Աղայի մեծածաւալ եւ արժէքաւոր նուիրատուութիւնների ցանկը, որում, ի շարս այլի, յիշատակւում են թուով ութ վարագոյր, այդ թւում նաեւ՝ վիշապազարդը. «**1 մեծ եւ պատուական վարագոյր Աւագ Խորանին ոսկիթել ասղնեգործ յորոյ վերայ տեսանին կերպարանք վիշապաց»***[26]: *Յայտնի է, որ Եաղուպ Աղան հիմնովին նորոգել է նաեւ Մշոյ Ս. Կարապետ վանքը: 1752 թուականին Սուլթան Մահմուդի հրամանով Եաղուպ Աղան Կ. Պոլսում գլխատւում է*[27]: *Նրա կենսագրական տուեալները ուսումնասիրելիս չենք հանդիպում որեւէ յիշատակութեան, որը կը փաստէր նրա՝ Չինաստան այցելութեան մասին: Ամենայն հաւանականութեան, չինական ծագման վիշապազարդ վարագոյրը նա պատուիրել եւ գնել է Չինաստանի հետ առեւտրով զբաղուող հայ վաճառականների միջոցով: Այն, որ Չինաստանի հետ հայ վաճառականութիւնը ունեցել է ակտիւ կապեր, նորոյթ չէ: Դրա մասին են վկայել բազում աղբիւրներ: Հրաչեայ Աճառեանը այս առիթով գրում է. «**Հայերը 17-18-րդ դարերում, օգտուելով չինական իշխանութիւնների հովանաւորութիւնից եւ չին բնակչութեան համակրանքից, հասել էին մեծամեծ պաշտօնների Չինաստանի տարբեր վայրերում: Հայ վաճառականը այնքան սովորական էր Չինաստանում, որ ճիզուիտ քարոզիչները ազատ ելք ու մուտք ունենալու նպատակով հայ վաճառականի զգեստ էին հագնում»***[28]: *Առհասարակ, «**դեռեւս 16-րդ դարից հայերը Չինաստանում ձեւաւորել էին փոքրիկ, սակայն կազմակերպուած հայկական գաղթօճախներ, ինչպէս Միջին Ասիայի սահմանամերձ շրջաններում, այնպես էլ երկրի հարաւում՝ Կանտոնում, Մակաոյում, Շանհայում, Հոնկոնգում կազմուած հիմնականում վաճառականներից եւ առեւտրականներից»***[29]: *Վերադառնալով Եաղուպ Աղայի անձին՝ կարող ենք եզրակացնել, որ նման ազդեցիկ մարդու համար Չինաստանից այդպիսի արժէքաւոր իր ձեռք բերելը պէտք է որ մեծ դժուարութիւն չլինէր: Ամենայն հաւանականութեան, նա օգտագործել է իր աշխարհասփիւռ կապերը եւ Երուսաղէմի հայոց վանքի համար նպատակային պատուիրել այս վիշապազարդ վարագոյրը:*

Եաղուպ Աղայ

*Եաղուպ Աղայի նուիրաբերած վարագոյրը յետագայում առնուազն երկու անգամ վերանորոգուել է, ինչի վերաբերեալ եւս կան գրաւոր արձանագրութիւններ: Առաջին վերանորոգութեան յիշատակութիւնը թուագրւում է 1783 թուականով՝ «**Յիշատակ է վարագոյրս մահտեսի Սիմային ի դուռն Սուրբ Յակոբայ ՌՄԼԲ»**: Այս արձանագրութիւնը ասեղնագործուած*

[24] **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Բ, Ս. էջմիածին, 2001, էջ, 3443:

[25] Հայ հանրագիտակ, էջ 646:

[26] **Ա. Եպս. Յովհաննէսեանց**, ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հտ. Բ, Երուսաղէմ, 1890, էջ 78-79:

[27] Եաղուպ Աղայի վերաբերեալ լրացուցիչ տե՛ս **Հ. Մ. Վրդ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Վենետիկ, 1784, էջ 864: Ինչպէս նաեւ՝ **Յ.Գ.Մ.**, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու 1400-էն 1900, Կ. Պոլիս, 1910, էջ 67-69:

[28] **Ռ. Աբրահամեան**, հայ գաղթաշխարհի պատմութիւն, հտ. բ, Երեւան, 2003, էջ 431, տե՛ս (ՀՀ ԳԱ Պատմութեան ինստիտուտի արխիւ, գործ 23, մասն Բ, էջ 3):

[29] Հայ գաղթաշխարհի պատմութիւն, հտ. Բ, էջ 429:

*է Քրիստոսի պատկերով շրջանակի ստորին յատուածում։ Արձանագրութիւնը իր բովանդակութեամբ յիշեցնում է նուիրատուութեան յիշատակութիւն, սակայն աւելի ուշ շրջանի վերանորոգութեան մէկ այլ արձանագրութիւնից հասկանում ենք, որ այն վերանորոգութեան մասին է։ Ուշ շրջանի վերանորոգութեան միւս գրութիւնը ասեղնագործուած է վարագոյրի մանուշակագոյն գօտիներից մէկի ստորին հատուածում. «**Վերստին նորոգեցաւ արդեամբ եւ ձեռամբ Այթապցի Էլիզ Մայրապետ Մոմճեանի ՌՋԾԵ 1955**»։ Հետաքրքրական տեղեկութիւններ են պահպանուել Մայրապետ Էլիզ Մոմճեանի կեանքից։ Նա ծնուել է 1893 թուականին հայաշատ Այնթապ քաղաքում եւ 1947 թուականին գալով Երուսաղէմ՝ երեք տարի յետոյ դարձել է Սուրբ Աթոռի նշանաւոր մայրապետերից մէկը։ Ինչպէս Այնթապցի շատ կանայք, այնպէս էլ տիկին Էլիզը ձեռագործ անելու մեծ շնորհ է ունեցել։ Դրա մասին են վկայում թէ՛ այս վարագոյրի նորոգութեան փաստը, թէ՛ նրա մահուան կապակցութեամբ գրուած մահախօսականը, որում մասնաւորապէս ասւում է. «**Էլիզ մայրապետ համբաւուած էր իբրեւ ձեռագործի նշանաւոր վարպետուհի։ Բազմաթիւ են իր ձեռքերէն բանուած շուրջառները, վարագոյրները, դպիրներու շապիկները եւ այլն, որոնցմէ շատերը իր ձեռքը անցած գումարներովը նուիրած է Ս. Յակոբեանց Տաճարին եւ այլ սրբավայրերու**»[30]։*

Եզրակացութիւն

Կարծում ենք, որ 1751 թուականին Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց տաճարին ընծայուած վիշապազարդ վարագոյրը իւր պատկերագրութեամբ Հայոց եկեղեցու վարագոյրների շարքում բացառիկներից է։ Հետաքրքիր է այն, որ վիշապը քրիստոնէական միջաւայրում վաղուց վերափոխուել է չարի խորհրդանիշի՝ թէեւ հայոց մէջ ունեցել է հազարամեակների պատմութիւն։ Կարծում ենք, որ վարագոյրը պատրաստուել է նրպատակային հէնց այդ խորանի համար, իսկ նրանում առկայ Յիսուս Քրիստոսի պատկերը աւելացուել է յետագայում։ Այդ երկու պատկերների համատեղմամբ ընդհանուր պատկերագրութիւնը խորհրդանշում է դժոխքի աւերումը եւ Տիրոջ յաղթանակը վիշապի՝ չարի նկատմամբ։

Առհասարակ, չինական մշակութային ներթափանցումները հայոց մէջ արձանագրուել են տարբեր ժամանակներում՝ յատկապէս նկատելի են հայոց կիլիկեան շրջանում։ Չինական մշակութային տարրերով տարբեր կիրառական արուեստի նմոյշներ հայերի կողմից օգտագործուել են թէ՛ աշխարհիկ, եւ թէ՛ հոգեւոր միջաւայրերում։ Նմոյշների մի շարք դրուագներում նկատելի են քրիստոնէական մոթիվների եւ չինական արուեստի միաձուլման տարբեր դրսեւորումներ, որը, ըստ էութեան, կարելի է համարել երկու տարբեր քաղաքակրթութիւնների հանդիպման իւրայատուկ արտայայտում։ Հետաքրքրական է վարագոյրի նուիրատուի անձը՝ Եաղուպ Աղան, որը եղել է սուլթանական արքունիքում մեծ ազդեցութեամբ բարձրաստիճան պաշտօնեայ։ Պատահական չէ, որ այդպիսի արժէքաւոր ընծայ կարող էր նուիրաբերուել բացառապէս նման ազդեցիկ անձնաւորութեան կողմից։

ՆԱՐԵԿ ՎԱՆ ԱԶՈՒՂԱԹՈՅԵԱՆ

---

[30] «**Սիոն**». Կրօնական, գրական, բանասիրական պաշտօնաթերթ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, 1973, խէ (5-8), էջ 192: